

Մկրտիչ Մկրտչյան
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
ասպիրանտ
Բրյուսովի անվան պետական համալսարան
ORCID ID: 0000-0002-3956-6533
mkrtchyan09@gmail.com
DOI: 10.54503/1829-0116-2026.1-246

**ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ԻԲՐԵՎ
ՄԻԿՐՈՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
(Անրի Վերնոյի «Մայրիկ» ինքնակենսագրության հիման վրա)***

Բանալի բառեր – պատումի նշանագիտություն, միկրոպատմություն, ինքնակենսագրություն, անձնական պատում, Մարսել, Մայրիկ, Անրի Վերնոյ:

Սույն հոդվածն ուսումնասիրում է ինքնակենսագրության զարգացող դերը՝ գրական ժանրից մինչև արժեքավոր պատմական աղբյուր: Հոդվածում առաջ է քաշվում այն գաղափարը, որ ինքնակենսագրությունը կարող է ծառայել որպես միկրոպատմություն՝ առաջարկելով յուրահատուկ տեսակետ որոշ մարդկանց կամ խմբերի փորձի մասին՝ ավելի լայն պատմական իրադարձությունների շրջանակներում:

Գործածելով նկարագրական և պատումի վերլուծության մեթոդը՝ հոդվածում ուսումնասիրվում է ֆրանսահայ կինոռեժիսոր Անրի Վերնոյի «Մայրիկ» ինքնակենսագրությունը: Այստեղ ցույց է տրվում, թե ինչպես է մեկ անձնական պատմությունը լուսավորում 20-րդ դարի սկզբին Մարսելում հաստատված հայ փախստականների կյանքը: Վերնոյի մանրամասն նկարագրությունները, սկսած իր ընտանիքի դժվարին ճանապարհորդությունից մինչև նոր, երբեմն ոչ բարեկամական միջավայր, ցույց են տալիս, թե ինչպես կարող են թվացյալ փոքր, աննշան մանրություններն օգնել հասկանալու պատումի ամբողջական համատեքստը՝ միաժամանակ նպաստելով համայնքի անցյալի նրբերանգային ընկալմանը:

* Հոդվածն ընդունվել է տպագրության 29.01.2026 թ.:
Ուղարկվել է գրախոսության 02.03.2026 թ.:

Mkrtich Mkrtchyan
PhD student
NAS RA Institute of Language after H. Acharyan,
Brusov State University
ORCID ID: 0000-0002-3956-6533
mkrtchyan09@gmail.com

AUTOBIOGRAPHY AS MICROHISTORY: THE CASE OF THE AUTOBIOGRAPHY MAYRIG HENRI VERNEUIL

Keywords: *semiotics of narrative, microhistory, autobiography, personal narrative, Marseilles, Mayrig, Henri Verneuil.*

The present article examines the evolving role of autobiography, tracing its development from a literary genre to a valuable historical source. It highlights the growing academic and public interest towards life narratives and suggests that autobiography can function as a form of microhistory, offering a distinctive perspective on the experiences of individuals or groups within the broader scope of historical events.

Using descriptive and narrative analysis, the article explores *Mayrig*, the autobiography of French filmmaker of Armenian origin Henri Verneuil. It demonstrates how a single personal narrative can illuminate the lives of Armenian refugees who settled in Marseille in the early 20th century. Verneuil's detailed recollections—from his family's arduous journey to their adaptation to a new and, at times, unwelcoming environment—show how seemingly minor details can reveal the broader context of a life story and contribute to a more nuanced understanding of a community's past.

Мкртыч Мкртчян
Аспирант
Институт языка имени Р. Ачаряна НАН РА
Государственный университет им. Брюсова
ORCID ID: 0000-0002-3956-6533
mkrtchyan09@gmail.com

АВТОБИОГРАФИЯ КАК МИКРОИСТОРИЯ: НА ПРИМЕРЕ АВТОБИОГРАФИИ «МАЙРИК» АНРИ ВЕРНЕЯ

Ключевые слова: *семиотика повествования, микроистория, автобиография, личное повествование, Марсель, Майрик.*

В данной статье рассматривается развивающаяся роль автобиографии — от литературного жанра до ценного исторического источника. Подчёркивается растущий академический и общественный интерес к жизненным повествованиям, а также выдвигается предположение, что автобиография может функционировать как форма микроистории, предлагая особую перспективу на опыт отдельных людей или групп в более широком контексте исторических событий. С этой целью в статье проводится описательный и нарративный анализ автобиографии «Майрик» французского режиссера армянского происхождения Анри Вернея.

Продемонстрировано, как личный рассказ одного человека способен пролить свет на жизнь армянских беженцев, обосновавшихся в Марселе в начале XX века. Подробные воспоминания Вернея — от тяжёлого путешествия его семьи до адаптации к новой и порой враждебной среде — наглядно показывают, как, на первый взгляд, незначительные детали могут раскрыть более широкий контекст (авто)биографического повествования и способствовать более нюансированному пониманию прошлого целого сообщества.

Ներածություն

Ինքնակենսագրությունը՝ որպես ժանր, ունեցել է տարբեր բնորոշումներ: Որոշ հեղինակներ պնդում են, որ գրական ժանրերի դասակարգումը թվում է հնացած և ավելորդ (Lecarme & Lecarme-Tabone 1999), մինչդեռ ուրիշները կարծում են, որ ինքնակենսագրությունը ժանր է, բայց զգայուն (sensitive) (Wagner-Egelhaaf 2019), կամ էլ այն գրական ժանր է, բայց՝ խնդրահարույց (de Grève 2008): Ինքնակենսագրությունը նույնիսկ համարվում է հիբրիդ ժանր՝ իր երկիմաստ բնույթի պատճառով: Ինչպես ընդգծում է Արնո Շմիթը (Schmitt, 2019: 29), ինքնակենսագրության մեջ «հիբրիդությունը դարձել է խիստ նորաձև վարկած, մինչդեռ հստակ ժանրի գաղափարն այժմ ավելի ու ավելի է մերժվում: Անհերքելի է, որ ժանրը երբեք հստակորեն չի սահմանվում, և արդյունավետ լինելու համար դրա սահմանումը պետք է լինի որքան հնարավոր է ճկուն»: Մարտին Լյոշնիգը պնդում է, որ «լայն իմաստով բոլոր գեղարվեստական ստեղծագործությունները ինքնակենսագրական են. ինքնակենսագրությունը որպես ժանր կարող է սահմանվել որպես արձակի մեջ համապարփակ ոչ գեղարվեստական պատում, որտեղ հեղինակը ներկայացնում է փաստեր սեփական կյանքից, և սովորաբար այն արվում է առաջին դեմքով» (Löschnigg 2005: 34–35):

Որոշ հեղինակներ գտնում են, որ ինքնակենսագրական տեքստերի ուսումնասիրությունը զարգացող և բարդ բնագավառ է, որտեղ ուսումնասիրում են անձնականի և հանրայինի, ճշմարտության և գեղարվեստականության, ինքնության և իսկության փոխազդեցությունը, ինչպես նաև փորձի և պատմողականության բնույթը՝ ի վերջո ընդլայնելով ժանրի սահմանները (Shands et al, 2015: 7): Հաշվի առնելով այս ամենը՝ ինքնակենսագրությունը կարելի է համարել առանձնահատուկ ժանր, որը պատկերում է հասարակության մեջ տեղի ունեցող իրադարձություններն ու փոփոխությունները պատմողի տեսանկյունից, որի ճշմարտացիությունը սուբյեկտիվ է:

Միկրոպատմություն և պատում

Որոշ իրադարձություններ ձևավորում են մի ողջ համայնքի, հանրության կյանքն ու մշակութային հիշողությունը: Այս համայնքների ներկայացուցիչները կարող են հետագայում հայտնի դառնալ, և նրանցից ոմանք կարող են նաև գրել իրենց կյանքի մասին՝ դառնալով հենց այդ համայնքի, հանրության ձայնը: Եվ այնտեղ պատկերված իրադարձությունները, ի վերջո, կարող են դառնալ այդ համայնքի կամ մարդկանց խմբի պատմությունը՝ դիտված ներսից:

Միկրոպատմությունը՝ որպես պատմագիտական մեթոդ և ժանր, կենտրոնանում է անհատի կյանքի, որն է իրադարձությունների կամ փոքր բնակավայրերի ուսումնասիրության վրա՝ նպատակ ունենալով այդ «փոքր միավորների» միջոցով վերլուծել պատմական լայն գործընթացները (Paul, 2018): Այս ուղղությունը ձևավորվել է 1970-1980-ական թվականներին (Peabody, 2012), իսկ ավելի կոնկրետ՝ 1977 թ. (Ginzburg, 2014: 10): Ըստ Ջ. Լևիի (Levi, 2005: 98)՝ միկրոպատմությունը պատասխան էր պատմագրության ճգնաժամին, որը պահանջում էր գործիքակազմի վերախմաստավորում: Իսկ Ս. Փիբոդին նշում է, որ որոշ պատմաբաններ հնարել են «միկրոպատմություն» ժանրը, որպեսզի, ապավինելով «բացառիկ նորմալի» (*exceptionale normale*)¹ սկզբունքին, հազվագյուտ պահպանված գրառումների միջոցով վերականգնեն մարզինալացված խմբերի, օրինակ՝ վաղ նոր շրջանի գյուղացիների «կորուսյալ պատմությունները», որոնք արտացոլում են սոցիալական կյանքի թաքնված նորմերը (Peabody, 2012: 2):

Միկրոպատմությունն ընթերցողին հնարավորություն է տալիս ավելի մոտիկից ծանոթանալու սովորական մարդու ապրելակերպին, թե նա ինչպես է ապրել, վերապրել որևէ իրադարձություն որոշակի ժամանակահատվածում: Ի հակադրություն ավանդական մակրոպատմությանը, որը հակված է չափազանցված ընդհանրացումների, միկրոպատմությունը հենվում է «փոքր փաստերի» ռեալիզմի վրա՝ ստեղծելով Ռ. Բարտի (Barthes, 2006) բնորոշած «իրականության տպավորությունը»: Ըստ Ի. Սիյարտոյի (Szijártó 2002: 210)՝ այս մոտեցման առավելությունն անձնական փորձառությունը հանրային լայն համատեքստին կապելն է, որը գրավում է ընթերցողին իր կոնկրետությամբ և կենդանի կենսափորձով: Չնայած կենսագրության հետ ունեցած նմանությանը՝ Ժ. Լեպորը նշում է հետևյալ

¹ Այն վերաբերում է եզակի կամ բացառիկ փաստագրված դեպքին (օրինակ՝ դատական գործ կամ անսովոր կենսագրություն), որը, սակայն, չի դիտարկվում որպես պարզապես անոմալիա: Ընդհակառակը, այս «օրինակելի բացառությունը» գործածվում է պատմաբանների կողմից՝ ի հայտ բերելու և լուսաբանելու համար հասարակական կյանքի տիպական կամ «թաքնված» իրողությունները, նորմերը և կանոնները, որոնք սովորական (մակրո) պատմական փաստաթղթերում հաճախ բացակայում կամ անտեսվում են:

սկզբունքային տարբերությունը. եթե կենսագրությունը կարևորում է անհատի եզակիությունը, ապա միկրոպատմությունը քննում է եզակի կյանքը որպես այլաբանություն՝ մշակութային ամբողջական խնդիրները լուսաբանելու համար (Lepore 2001: 130-132): Վերջնարդյունքում անհատական վկայություններն ու ինքնակենսագրությունները վերածվում են համայնքային հիշողության և ներսից դիտարկված պատմության՝ հաճախ ստանձնելով տվյալ հանրության հավաքական ձայնի դերը:

Ինքնակենսագրությունը որպես միկրոպատմություն

Ավելի լավ կյանքի որոնման համար դժվարին ճանապարհորդություն կատարած փախստականների ինքնակենսագրությունները կարող են ծառայել որպես միկրոպատմության գերազանց օրինակ: Փախստականի ինքնակենսագրությունը կարող է հիմք հանդիսանալ հետազոտողի համար՝ որոշակի ժամանակահատվածում և որոշակի վայրերում փախստականի կյանքի ընդհանուր պատկերը կազմելու համար:

Միկրոպատմության օրինակ կարող են ծառայել հայ փախստականների ինքնակենսագրական պատումները, որոնք Հայոց ցեղասպանության վերաբերյալ գրել են իրենց վերապրումները և այն, թե իրենց կյանքում ինչ ազդեցություն է ունեցել այդ իրադարձությունը:

Պատմաբանը կարող է ավելի լայն եզրակացություններ անել հայերի աքսորի տանջալից և վտանգավոր ճանապարհորդության մասին՝ ուսումնասիրելով նրանց վկայություններն ու ինքնակենսագրություններն ու համադրելով այդտեղ պատկերված իրադարձությունները: Բացի այդ՝ այս միկրոպատմությունների վերլուծությունը կարող է լույս սփռել երբեմն այնպիսի մանրուքների վրա, ինչպիսիք են, օրինակ, թե ինչպես են հայերը փրկվել, ովքեր են նրանց օգնել կամ դավաճանել, օգտվել նրանց դժբախտ իրավիճակից, և որ ամենակարևորն է, թե այդ ամենն ինչպես է տեղի ունեցել:

Այստեղ տեղին է մեջբերել Կ. Գինզբուրգին, որը նշում է, որ «պատմական գիտելիքներն ակնհայտորեն ենթադրում են վավերագրական շարքերի կառուցում: [...] Ցանկացած փաստաթուղթ, նույնիսկ ամենասակավ նորմալը, կարող է ներառվել շարքի մեջ: Բացի այդ՝ այն, եթե պատշաճ կերպով վերլուծվի, կարող է լույս սփռել ավելի լայն վավերագրական շարքերի վրա» (Ginzburg, 2014: 21): Եվ իրապես, վկայությունների այս շարքը կարող է դառնալ պատմական փաստաթուղթ, օրինակ՝ պատերազմներ և ցեղասպանություններ վերապրած մարդկանց վկայությունները, և թե ինչպես են նրանք խուսափել մահից և գտել ապաստան, թե ինչպես են ինտեգրվել ընդունող հասարակությանը:

Հայերի ցեղասպանությունը մարդկանց մեծ մասին հայտնի է որպես ցավալի իրադարձություն, որը տեղի է ունեցել Եվրոպայի ծայրամասում՝ խարխլվող Օսմանյան կայսրությունում, որտեղ հայերը՝ քրիստոնյա փոքրամասնություն, արտաքսվել և սպանվել են թուրք ազգայնականների կողմից: Պատմության որոշ գրքերում ներկայացվում է իրադարձությունների ժամանակագրությունը՝ ընթերցողներին տրամադրելով եղելության ընդհանուր պատկերը: Միննույն ժամանակ, այդ դեպքերն ավելի նեղ տեսանկյունից հասկանալու համար պետք է կարդալ, դիտել կամ տեսնել ցեղասպանությունը վերապրածների անմիջական վկայությունները: Լինելով սուբյեկտիվ՝ եղելության անմիջական ականատեսի պատումները պատկերացում են տալիս այն մասին, թե ինչպես է անհատը վերապրել տվյալ իրողությունը:

Այսպիսով՝ ինքնակենսագրական հիշողությունը չափազանց արժեքավոր է պատմական իրադարձությունները հասկանալու համար, որոնք միշտ չէ, որ կարող են հետաքրքիր լինել պատմաբանների համար: Ինչպես նշել է Ռոբին Ֆիվուշը. «Ինքնակենսագրական հիշողությունը մարդու անձնական կյանքի սոցիալ-մշակութային կառուցված պատմություն է և, որպես այդպիսին, մշակութային առումով հագեցած է, և այն պետք է հասկանալ անհատական իմաստավորման սուբյեկտիվ տեսանկյունից» (Fivush, 2013: 13):

Ինքնակենսագրական հիշողությունը մշակույթի և հասարակության ազդեցությամբ ձևավորված որոշակի իրադարձությունների վերաբերյալ տեսակետ է: Հետևաբար, Ֆրանսահայերի տեսանկյունից հայերի ցեղասպանության և տեղահանության պատումները որոշ չափով պետք է տարբերվեն այն հայերի պատումներից, որոնք ապաստան են գտել Սիրիայում, Իտալիայում, Ավստրալիայում կամ Ամերիկայում, քանի որ, նախ, նրանք տեղահանվել են Օսմանյան կայսրության տարբեր մասերից, և հետո, նրանք բոլորն ունեցել են արքայի տարբեր ճանապարհներ: Սակայն մի բան, այնուամենայնիվ, նրանց բոլորին միավորում է՝ բռնի տեղահանումը և ցեղասպանությունը:

Այս նրբերանգային, անհատական ուղիները հասկանալու համար անգնահատելի են դառնում ինքնակենսագրական պատումները, ինչպիսին է Անրի Վերնոյի «Մայրիկ» (2021) ինքնակենսագրությունը, որը խորապես անձնական և մշակութային առումով հարուստ տեսակետ է Ֆրանսիայում ապաստան գտած հայ փախստականների կյանքի մասին:

Վերնոյը «Մայրիկ» ինքնակենսագրական վեպն սկսում է՝ ներկայացնելով մոր կյանքի վերջին պահերն ու իր ապրումները: Այն գեղեցիկ նկարագրություն է, որն ընթերցողին մասնակից է դարձնում այդ անձնական ողբեր-

գությանը, որը, ընդհանուր առմամբ, նման է սեփական մոր հոգեվարքին ականտես լինող ցանկացած բանական մարդու տառապանքներին: Օրինակ՝ Վերնոյը նշում է, որ «դիպլոմավորված» հիվանդապահը հերթապահ շարժումներն էր անում՝ ժամանակ առ ժամանակ թարմացնելով մայրիկի ճակատին դրված «օդեկոլոնով թրջված անօգուտ» սրբիչը, ուղղելով վերմակը, որը «տեղից չէր շարժվել», այնուհետև նստում տեղն ու կարդում «հաստափոր արկածային վեպը»: Վերնոյն ամփոփում է իր հոգին նեղացնող հիվանդապահի պարտականությունները՝ գրելով. «Նրա առերևույթ ուշադրության տակ թաքնված է մի սիրտ, որ կարծրացել է մշտապես հիվանդ խնամելուց» (Վերնոյ, 2021: 6): Այսինքն՝ այս սովորական անմեղ շարժումները կարող են սրտամորմոք լինել մայրիկի մոտալուտ մահից վշտացած ցանկացած ողջախոհ մարդու համար՝ անկախ նրա ազգային պատկանելությունից:

Մյուս կողմից՝ այս նկարագրությունը յուրովի է. նախ, որովհետև այն Վերնոյի՝ որպես սուբյեկտի, անհատի նկարագրությունն է, և երկրորդ, սա հայ «Մայրիկի» կյանքի մայրամուտի նկարագրությունն է: Այդ գեղեցիկ ու սրտահույզ նկարագրության մեջ Վերնոյը շեշտում է, թե ինչպես են հայերը գնահատում և մեծարում իրենց մայրերին նույնիսկ Ֆրանսիայում:

– Նրան ուղեկցում եմ մինչև դուռը: Հրաժեշտից առաջ մի պահ վարանում է, ապա խորհուրդ է տալիս Մայրիկին փոխադրել մի լավ, շքեղ հիվանդանոց, որտեղից ավելի հարմար կլինեք...

Ճիշտ այդ պահին, հազարամյակներ առաջ ջրասույզ եղած կարծեցյալ Իս քաղաքի եկեղեցիների զանգերի նման, որոնք իբր խաղաղ եղանակներին դեռ հնչում են ծովի խորքից, գլխիս մեջ դողանջեցին մեր եկեղեցիների զանգերը՝ ինձ հիշեցնելով մեր արմատները, մեր ծագումը, մեր ավանդությունները: Ես հայ եմ, մեզ մոտ մայրերը մեռնում են տանը: (Վերնոյ 2021: 7)

Վերնոյի ինքնակենսագրությունից կարելի է իմանալ, թե, օրինակ, ինչպես են որոշ հայեր նավով հասել Ֆրանսիա, և թե ինչքան դաժան է եղել այդ նավարկությունը, թե ինչպես են նավարկության ժամանակ ազատվել մահացածներից: Այս տեսարանը խորը հոգեբանական ցնցում է եղել փոքրիկ Վերնոյի համար, որը նա պիտի հիշի այսպիսի տողերով.

– Երբ անունդ Պրուստ չէ, սևեռուն հիշողությունդ մանկության առաջին հուշերիդ մեջ արձանագրում է լոկ մեծ ցնցումները, որոնք ապրել ես մեծերի աշխարհում:

Դա կարող է լինել ուժեղ վախ, խիստ պատիժ՝ ինչ-որ հիմարության համար, սքանչացում որևէ հայտնության առջև, սոսկում

կոպիտ արարքից կամ առաջին վիճակից ծնված ցավ:
(Վերնոյ, 2021: 10)

Վերնոյը նշում է, որ այն օրը, երբ իրենք «խարիսխ գցեցին Ֆրանսիա երկրում», Գաստոն Դումերգն ընտրվել էր Ֆրանսիայի նախագահ, «Լենին անունով մի մարդ» մահացել էր Գորկիում, Ֆրանսիայի մեծ էկրաններից ցուցադրվում էր Ս. Մ. Էյզենշտեյնի «Պոտյոմկին զրահանավը»: Սրանք արտաքին նշաններ են, որոնք ինքնակենսագրության սուբյեկտիվությունը կապում են արտաքին աշխարհին: Սրանք փոքրիկ փաստեր են, որոնք ընթերցողին հավաստիացնում են անձնական պատումի իրականության մասին: Դրանք նման են արդեն իսկ մատնանշված իրականության էֆեկտին:

Ֆրանսիացի նշանաբան Ռոլան Բարտի կարծիքով՝ տեքստում իրականի ազդեցություն/ տպավորությունը (*effet de réel*) ունի մեկ գործառույթ՝ հաստատել տեքստի և կոնկրետ իրական աշխարհի միջև առկա հարակցությունը: Բարտը (Barthes 2006: 231) նշում է, որ գրականության մեջ թվացյալ ցանկացած աննշան տարր, մանրուք (*insignificant notation* – աննշան դիտարկում) իրականում գաղափարական գործառույթ ունի՝ նշանակելով բուն իրականությունը՝ ի տարբերություն պատմողական կառուցվածքի, որը հիմնականում կանխատեսողական (*predictive*) է: Այսինքն, եթե պատումը շարունակաբար ազդարարում է, թե ինչ կկատարվի հերոսի կամ ընթերցողի հետ, ապա աննշան տարրերը պարզապես արտացոլում են տվյալ պահը՝ դրանով իսկ ստեղծելով օբյեկտիվության և իսկության տպավորություն: Եվ ըստ Բարտի՝ որևէ տեքստի վերլուծություն չի կարող ավարտուն լինել՝ առանց հաշվի առնելու այս աննշան թվացող մանրուքները (*useless details*) (Barthes 2006: 231):

Իր ինքնակենսագրության մեջ Վերնոյը նկարագրում է, թե ինչպես են իրենք կարողացել տեղավորվել անձանոթ քաղաքում՝ Մարսելում: Հետաքրքրաշարժ է նրա պատումն այն մասին, թե ինչպես էին ոսկեդրամները կոճակների տեսքով կարվել նրա մայրիկի զգեստի վրա, և այդ «ուր» կոճակները մեր «վերապրելու ունակության» գինն էին» (Վերնոյ 2021: 17): Այս հատվածը նկարագրում է հայ մարդու ճարպկությունը և այն դժվարությունները, որի պատճառով ստիպված էին քողարկել իրենց ունեցվածքը: Այդուհանդերձ, միկրոպատմության տեսանկյունից այս մանրուքը նաև հաղորդում է, որ Հայոց ցեղասպանության ժամանակ երևի թե պետք էր նաև գումար ունենալ՝ փրկվելու, նոր կյանք սկսելու համար:

«Մայրիկ» ինքնակենսագրության մեջ նաև կան տողեր, որոնք նկարագրում են 20-րդ դարասկզբի Մարսելը. ամենաերկար փողոցը Պարադի փողոցն էր, ամենամեծ դպրոցը՝ Մելիզան ուսումնական հաստատությունը, «որ կրթում էր ապագայի մեծ մարդկանց, քանի որ քաղաքի մեծամեծե-

րը այնտեղ էին ուղարկում իրենց որդիներին» (Վերնոյ 2021: 66–67): Կամ էլ, որ այդ ժամանակ դպրոցներն էին տալիս տետրերն ու գրքերը, իսկ դպրոցները բացվում էին հոկտեմբերի 1-ին՝ ժամը 9-ին: Իսկ Մարսելի հասարակական տրանսպորտի մասին իմանում ենք, որ նախ չէին մերժում ոչ մի ուղևորի և անտոմս ուղևորներին տոմսակ չէին մեկնում, քանի որ նրանց «ձեռքերը զբաղված էին և չէին կարողանում գրպանից փող հանել» (Վերնոյ 2021: 148):

Անրի Վերնոյի ինքնակենսագրությունը բնականաբար միկրոպատմություն է Մարսելի հայերի մասին, թե ինչպես էին հավաքվում ամեն տարի ապրիլի 24-ին՝ հիշատակելու և սգալու մերձավորների ու հայրենիքի կորուստը: Այն մեկ անձի տեսանկյունից նկարագրում է մի ողջ համայնքի ապրելակերպը:

Ինքնակենսագրության մեջ Վերնոյը նաև պատկերում է 20-րդ դարի ֆրանսիական Մարսելի անբարեհամբույր վերաբերմունքը նորեկների հանդեպ. հարևանների դժկամությունը՝ նրանց ընդհանուր խոհանոց թույլ չտալուց մինչև դասարանցիների կողմից փոքրիկ տղային ծաղրանքի ենթարկելն իր անվան ու քրիստոնեական ոչ կաթոլիկ կրոնի պատճառով: Վերնոյն իր մանկության տառապանքները հիշում է՝ գրելով, որ անհայրենիք մարդիկ դատապարտված են միաժամանակ երկու մանկության (Վերնոյ 2021: 40):

– ... հատակին ուղղված ցուցամատը, որ հետո ուղղվեց աստիճաններին, մեզ պարզորոշ հասկացնել տվեց, թե ինքը գտնվում է իր երկրում՝ Ֆրանսիայում, և եթե մենք գոհ չենք, կարող ենք ... և այլն: (Վերնոյ 2021: 29)

Եվ Վերնոյի այս տողերն ընդհանուր առմամբ ամփոփում են ներգաղթյալի կարգավիճակը. պետք է հարմարվել, կամ էլ գնալ հետ, սակայն ցեղասպանությունից փրկվածներից համար հետվերադարձ չկա:

Եզրակացություն

Ինքնակենսագրությունը, հիրավի, ինքնատիպ ժանր է, որը գրվում է ակադեմիական տարբեր բնագավառների հետազոտողներին: Ինչպես ցույց տվեց Անրի Վերնոյի «Մայրիկ» ինքնակենսագրության վերլուծությունը, անհատական պատումը կարող է ծառայել որպես միկրոպատմություն՝ լույս սփռելով պատմական իրադարձությունների ազդեցությանը մարդկային կյանքի վրա: Լինելով անհատի փորձառություն՝ ինքնակենսագրությունը երբեմն դառնում է միկրոպատմություն՝ բացահայտելով այն նրբությունները, որոնք հաճախ բացակայում են ավանդական պատմական աղբյուրներում: Վերնոյի ինքնակենսագրությունը ցույց է տալիս, թե ինչպես են

թվացյալ փոքր, աննշան մանրամասները և անձնական հիշողությունները համախմբվում՝ կերտելով մի համայնքի համապարփակ պատում՝ Ցեղասպանությունից փրկված հայերի նոր կյանքի ձևավորումը 20-րդ դարասկզբի ֆրանսիական Մարսելում: Ինքնակենսագրությունը միկրոպատմություն ըմբռնելը կարևոր է ոչ միայն ֆրանսահայ համայնքի մասին գիտելիքները խորացնելու, այլև հարկադիր գաղթի կամ ցեղասպանությունների ենթարկված այլ խմբերի «կորսված պատմությունները» վերականգնելու համար, որոնք հաճախ բացակայում են պաշտոնական պատմագրության մեջ: Վերնոյի «Մայրիկը» միկրոպատմություն է նաև Մարսելի մասին՝ ներկայացված ներգաղթյալի տեսակետից: Այս աննշան թվացող մանրուքները ինքնակենսագրությունն իրավացիորեն դարձնում են անգնահատելի պատմական աղբյուր, որը, համադրվելով նմանատիպ այլ միկրոպատմությունների հետ, դառնում է պատումների շարք, որոնք կերտում են հավաքական և մշակութային հիշողությունը:

Գրականության ցանկ

1. **Վերնոյ Ա.**, Մայրիկ, Երևան, Գրքամուլ, 2021, 273 էջ:
2. **Barthes R.**, The reality effect, *The Novel: An Anthology of Criticism and Theory* 1900-2000, NJ, Wiley-Blackwell, 2006, pp. 229–234.
3. **Grève de M.**, L'autobiographie, genre littéraire? *Revue de Littérature Comparée*, 325(1), 2008, pp. 23–31. <https://doi.org/10.3917/rlc.325.0023>
4. **Fivush R.**, Autobiographical memory, *Research Methods for Memory Studies* (Research methods for the arts and humanities), Edinburgh, Edinburgh University Press, 2013, pp. 13–28.
5. **Ginzburg C.**, Microhistory: Two or three things that I know about it, *Egdocuments and History Series Vol. 7* (1), Leiden, Brill Academic Publishers, 2014, pp. 139–166.
6. **Lecarme J., Lecarme-Tabone E.**, *L'Autobiographie* (2nd ed.), Paris, Armand Colin, 1999, 128 p.
7. **Lepore J.**, Historians Who Love Too Much: Reflections on Microhistory and Biography, *The Journal of American History*, 88(1), 2001, pp. 129–144. <https://doi.org/10.2307/2674921>
8. **Levi G.**, On microhistory, *New Perspectives on Historical Writing* (2nd ed.). PA, Polity Press, 2005, pp. 97–119.
9. **Löschnigg M.**, Autobiography, *Routledge Encyclopedia of Narrative Theory*, NY, Routledge, 2005, pp. 34–36.
10. **Paul J.**, What is Microhistory? *Social Evolution & History*, 17(2), 2018, pp. 64–82. <https://doi.org/10.30884/seh/2018.02.04>
11. **Peabody S.**, Microhistory, Biography, Fiction. *Transatlantica*, (2), 2012. <https://doi.org/10.4000/transatlantica.6184>
12. **Schmitt A.**, The phenomenology of autobiography: Making it real, NY, Routledge, 2019, 178 p.
13. **Shands K., Grillo Mikrut, G., Pattanaik, D. R., Ferreira-Meyers, K.**, Writing the self: Essays on autobiography and autofiction, Huddinge, Södertörns högskola, 2015, 381 p.

14. **Szijártó I.**, Four Arguments for Microhistory, *Rethinking History*, 6(2), 2002, pp. 209–215. <https://doi.org/10.1080/13642520210145644>
15. **Wagner-Egelhaaf M.**, Introduction: Autobiography/Autofiction Across Disciplines, *Handbook of Autobiography / Autofiction*, Berlin, De Gruyter, 2019, pp. 1–7.

References

1. **Vernoy A.**, Mayrik [Mother], Erevan, Grqamol, 2021, 273 e'j. (in Armenian):
2. **Barthes R.**, The reality effect, *The Novel: An Anthology of Criticism and Theory 1900–2000*, NJ, Wiley-Blackwell, 2006, pp. 229–234.
3. **Grève de M.**, L'autobiographie, genre littéraire? *Revue de Littérature Comparée*, 325(1), 2008, pp. 23–31. <https://doi.org/10.3917/rlc.325.0023>
4. **Fivush R.**, Autobiographical memory, *Research Methods for Memory Studies (Research methods for the arts and humanities)* Edinburgh, Edinburgh University Press, 2013, pp. 13–28.
5. **Ginzburg C.**, Microhistory: Two or three things that I know about it, *Egdocuments and History Series Vol. 7 (1)*, Leiden, Brill Academic Publishers, 2014, pp. 139–166.
6. **Lecarme J., Lecarme-Tabone E.**, *L'Autobiographie* (2nd ed.), Paris, Armand Colin, 1999, 128 p.
7. **Lepore J.**, Historians Who Love Too Much: Reflections on Microhistory and Biography, *The Journal of American History*, 88(1), 2001, pp. 129–144. <https://doi.org/10.2307/2674921>
8. **Levi G.**, On microhistory, *New Perspectives on Historical Writing* (2nd ed.), PA, Polity Press, 2005, pp. 97–119.
9. **Löschnigg M.**, Autobiography, *Routledge Encyclopedia of Narrative Theory*, NY, Routledge, 2005, pp. 34–36.
10. **Paul J.**, What is Microhistory? *Social Evolution & History*, 17(2), 2018, pp. 64–82. <https://doi.org/10.30884/seh/2018.02.04>
11. **Peabody S.**, Microhistory, Biography, Fiction. *Transatlantica*, (2), 2012. <https://doi.org/10.4000/transatlantica.6184>
12. **Schmitt A.**, *The Phenomenology of Autobiography: Making it Real*, NY, Routledge, 2019, 178 p.
13. **Shands K., Grillo Mikrut, G., Pattanaik, D. R., Ferreira-Meyers, K.**, *Writing the self: Essays on autobiography and autofiction*, Huddinge, Södertörns högskola, 2015, 381 p.
14. **Szijártó I.**, Four Arguments for Microhistory. *Rethinking History*, 6(2), 2002, pp. 209–215. <https://doi.org/10.1080/13642520210145644>
15. **Wagner-Egelhaaf M.**, Introduction: Autobiography/Autofiction Across Disciplines, *Handbook of Autobiography / Autofiction*, Berlin, De Gruyter, 2019, pp. 1–7.

Մկրտիչ Մկրտչյան – ՀՀ ԳԱԱ Հ Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, ասպիրանտ ու դասախոս Բոլոնյայի անվան պետական համալսարանում: Հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է նշանագիտությանը, թարգմանության տեսությանը, ընդհանուր և գուգադրական լեզվաբանությանն առչվող խնդիրները: Հեղինակ է յոթ հոդվածի, որոնք տպագրվել են Հայաստանում և արտերկրում:

ORCID ID: 0000-0002-3956-6533
mkrtyan09@gmail.com

Мкртыч Мкртчян – младший научный сотрудник Института языка им. Г. Ачарьяна НАН РА, аспирант и преподаватель в Государственном университете им. В. Брюсова. В сферу интересов входят семиотика, теория перевода, общая и сопоставительная лингвистика. Автор семи статей, опубликованных в Армении и за рубежом.

ORCID ID: 0000-0002-3956-6533
mkrtchyan09@gmail.com

Mkrtich Mkrtchyan – a junior researcher at the NAS RA H. Acharyan Institute of Language, as well as a graduate student and lecturer at Brusov State University. His research interests encompass semiotics, translation theory, and both general and contrastive linguistics. Mkrtchyan has authored seven articles, which have been published in Armenia and abroad.

ORCID ID: 0000-0002-3956-6533
mkrtchyan09@gmail.com